

- 135 Յայս բան նորին Սարգիս բաբուն
 Կասեալ ըզնա ի կոծելոյն
 Մըխիթարէր անդրէն իսկոյն
 Ըսփոփելի բանիւ ներհուն:
- 136 Ի վաղջանի Յակոբ ծիւրեալ,
 Իբբու բբունի հաճեցուցեալ,
 ԸզԳրիգոր բաբուն գովեալ,
 Կարգէր ինքեան յաջորդ ընտրեալ:
- 137 Ապա Յակոբ բրաբունի
 Իբբր երկուց ամսոց ըզկնի՝
 Ի հանդերձեալն յաստեաց փոխի,
 Առ տալ համար իւր բստեղծչի:
- 138 Եւ մինչ թաղիւր նորին մարմին
 Ի գամբարանս Պէյօղլուին,
 Առնէր Սարգիս ի նոյն վայրին
 Ողբերգաբար զգովեստ նորին:
- 139 Եւ յիրաւի Յակոբ նալեան
 Էր գրբուատից մեծաց արժան,
 Եթէ չէր լեալ փառաց մարդկան,
 Եւ Աթուոյն գերի հաւան:
- 140 Զի առ պահել միշտ ըզգահ իւր,
 Յար անկասկած վայելել գիւր,
 Ի սէր Ազգին ւ՛ ի փառքս իւր,
 Ընդ լաւս վատ իսկ խառնել հարկիւր:
- 141 Ապա եղևկ մարդահաճի,
 Որ բզսին փառս այս աշխարհի
 Ի վեր դասէ քան զփառս երկնի,
 Չարն հրոշակեալ որպէս բարի: